

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գեորգ Ե. Ամենայն Հայոց
Կաթողիկոսի անուանակոչութիւնը, Գեորգեան Հ.
նեմարանի տօնը եւ ս. Միլոսնի օրհնութիւնը.

Դեռ շատ վաղու անից յայտնի էր, որ աշնանը ս. Միլոսնի օրհնութիւն պիտի լինի և Նորին Վեհափառութիւնը իւր յուլիս 2-ի թ. 404 կոնդակով առաջադրել էր Սինօզին՝ շրջաբերականներով անյապաղ տեղեկութիւն տալ Կ. Պօլսի և Երուսաղէմի Ամենապատիւ պատրիարքներին և Ռուսաստանի, Եւրոպայի և Ամերիկայի բոլոր թեմակալ առաջնորդներին, որ ս. Միլոսնի օրհնութիւնը պիտի կատարուի սեպտեմբեր 30-ին, Վարազայ ս. Խաչի տօնին, Իսկ դրանից մի օր առաջ, սեպտ. 29-ին, ընկնում էին ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Գեորգ Ե.-ի անուանակոչութեան և Գեորգեան Հ. ճեմարանի 38-րդ տարեդարձի տօները. այսպիսով, ինչպէս տեսնում ենք, համազգային բնաւորութիւն ունեցող երեք մեծ տօներն էլ մի դեղեցիկ զուգաւորութեամբ միմեանց հետ էին ընկել և բնականաբար Էջմիածինն ու ճեմարանը կատարեալ տօնական պատկեր պիտի ստանային: Եթէ ի նկատի ունենանք այն ևս, որ այդ օրերը առհասարակ նաև ուխտագնացութեան օրեր են, այն ժամանակ պարզ կլինի, թէ այս տարի որքան ժողովուրդ պիտի հաւաքուի ս. Էջմիածնում:

Եւ իսկապէս սեպտեմբերի 24-ից ուխտաւորները սկսեցին գալ. մի երկու օրից յետոյ վաճառքն ու Վաղարշապատը բոլորովին այլ տեսք էին ստացել: Տենդային արագութեամբ շինւում էին Վաղարշապատի հրապարակում զանազան տեսակի մթերքներ վաճառելու համար ժամանակաւոր խանութներ. եկող հազարաւոր ժողովրդին կերակուր մատակարարելու համար գիւղացիք շինել էին ժամանակաւոր

կրակարաններ, իսկ մրգավաճառութիւնը, լայն չափեր էր ընդունել: Վաղարշապատը վաղուց է այդպիսի տօնավաճառ չէր տեսել:

Վանքումն ևս վաղուց սկսել էին պատրաստութիւններ տեսնել, որպէսզի եկող ուխտաւորների գոնէ մի մասին կարողանան տեղաւորել. այդ նպատակով հայրապետական կոնդակով կարգուել էր յատուկ մասնաժողով՝ նախագահութեամբ Մատթէոս վարդապետի և անդամակցութեամբ Սիօն վարդապետի ու Ռուբէն արեղայի: Կարգադրիչ յանձնաժողովը հիւրերի համար որոշել էր յատկացնել վանքի հիւրանոցը, ճեմարանի վերին յարկի սենեակները, ճեմարանի բակում գտնուած հին Սինօղի շինութեան վերին յարդը և դիւղի տղայոց դպրոցի շէնքը:

Տօների պատճառով սեպտ. 27-ից դասերը դադարեցրուած էր ճեմարանում: ամեն տեղ՝ թէ՛ վանքում և թէ՛ ճեմարանում աշխատում էին, որքան կարելի է, տօները փառաւոր կացուցանել: Միւռոնօրհնէքի նախորդ օրը շաբաթ, Նորին Վեհափառութեան Դէորդ Ե-ի անուանակոչութիւնն էր և Գ. ճեմարանի տօնը: Տաճարում հանդիսաւոր պատարագ կար. պատարագիչն էր Ներսէս արքեպիսկոպոս Խուրավէրդեանը (թեմակալ առաջնորդ Բեսարաբիայի և Ն.-Նախիջևանի թեմի). պատարագին ներկայ էր Նորին Ս. Օծուլթիւնը, ամբողջ միաբանական ուխտն ու քահանայական դասը և խուռն բազմութիւն ուխտաւորների: Պատարագից յետոյ Նորին Վեհափառութեան արեւշատութեան համար հայրապետական մաղթանք կատարուեց Մ. Տաճարում, որից յետոյ Կաթուղիկոսը նստեց հայրապետական աթոռի վերայ իջման սեղանի առջև և միաբանութիւնը աւագութեան կարգով շնորհաւորեց Հայրապետի տօնը՝ համբուրելով Նորա աջն ու ձեռքին բռնած խաչը: Միաբանութիւնից յետոյ շնորհաւորեց քահանայական դասը, որից յետոյ Վեհափառի աջն առնելու արժանացան եկեղեցումն եղած ուխտաւորներից շատ քչերը:

Պատարագից յետոյ ըստ սովորութեան հոգեհանգիստ պիտի կատարուէր Դէորդ Դ-ի գերեզմանի վերայ. Նորին

Վեհափառութիւնն ու միաբանութիւնը երգեցողութեան ուղեկցութեամբ եկան և շրջապատեցին երջանկայիշատակ Տ. Տ. Գեորգ Դ. մեծազործ Կաթողիկոսի գերեզմանը և հանդիսաւոր կերպով կատարեցին հոգեհանգստեան կարգը ժողովրդեան ներկայութեամբ. ինչպէս պատարազին, այնպէս էլ այստեղ երգում էր ճեմարանի աշակերտներից կազմուած քառաձայն խումբը՝ ճեմարանի ուսուցիչ Ռուբէն արեղայի ղեկավարութեամբ։ Վանքի բակում ահազին բազմութիւն կար. կարգապահութեան վերայ հսկում էր զինուորսների վաշտը՝ գաւառապետի և օգնականների հսկողութեամբ։

Հոգեհանգստից յետոյ նորին Վեհափառութիւնը բարձրացաւ վեհարան, ուր բարեհաճեց ընդունել ճեմարանի ուսուցչական խմբին և սաներին. վերջիններիս ներկայացնում էր տեսուչ Բադրատ վարդապետը։ Աշակերտութիւնից յետոյ նորին Վեհափառութեանը պատիւ ունեցան ներկայանալու ուխտաւորներից յայտնի անձնաւորութիւններ, որոնք հարիւրաւոր և հազարաւոր վերստեր կտրել, անցել, եկել էին տեսնելու և նորին Վեհափառութեան աջն առնելու համար։

Մի ժամուայ հանգստից յետոյ Վեհափառ պիտի դար ճեմարան, որովհետեւ այդ օրը ճեմարանում զրականերաժշտական հանդէս կար և տեսուչը պիտի կարդար ճեմարանի տեղեկազիրը՝ ի ներկայութեան ամբողջ միաբանութեան և հայ ժողովրդեան։ Ուխտաւորները ժամ առաջ համախմբուել էին ճեմարանի հիւսիսային դրան յառաջ և սպասում էին նորին Վեհափառութեանը, որի ներկայութեամբ միայն պիտի բացուէր հանդէսը։ Ճեմարանի աշակերտներն ու վարչութիւնը նախորդ տարիների նման զարդարել էին ճեմարանի հիւսիսային ճակատը ընկուզենութեամբ տերեւներից շինուած շղթաներով։ Ճակատի միջին կիսակամարի մէջ դրուած էր Տ. Տ. Գեորգ Դ. Կաթողիկոսի իւզանկարը. իսկ միւս երկու կողմերից՝ ներկայ կաթողիկոսի և կրկին Գեորգ Դ-ի լուսանկարները մեծացրած զիրքերով. իսկ մէջ տեղի կիսակամարի ցածրում, իւզա-

նկարի տակը կախուած էր թարմ ծաղիկներից հիւսած
 ԼԼ տառերը իբրեւ արտայայտիչ 38-րդ դարեդարձի Գէորգեան
 Հ. ճեմարանի: Ճեմարանի հիւսիսային կողմի զըլ-
 խաւոր մուտքի առաջ կարմիր մահուղով և խալիչաներով
 զարդարուած պատուանդանի վերայ դրուած էր հայրա-
 պետական Սթոքը իսկ երկու կողմերում և դէպի առաջ
 շարուած էին բազկաթոռներ և աթոռներ միաբանութեան
 և հիւրերի համար:

Մի ժամից յետոյ գալիս է Վեհափառ Հայրապետը և
 իւր բարձր ներկայութեամբ բաց է անում հանդէօը. ըստ
 պատշաճի շարականն երգելուց յետոյ, ամբիօն է բարձրա-
 նում ճեմարանի տեսուչ բարձրապատիւ Բագրատ վարդա-
 պետը, որ մի համառօտ, բայց բովանդակալից ատենա-
 բանութեամբ բացադրում է ճեմարանի, իբրեւ հայկական
 միակ բարձրագոյն կրթական հիմնարկութեան՝ համազգային
 բնաւորութիւն ունենալը, որից յետոյ ծանօթացնում է
 այդ բարձրագոյն միակ հիմնարկութեան համառօտ տեղե-
 կազրի հետ, որով ունկկիրների առաջ պարզում է ճեմա-
 րանի և յարակից հիմնարկութիւնների պատկերը անցեալ
 1911—12 ուսմ. տարուայ ընթացքում:

Տեսուչ Բագրատ վարդապետից յետոյ ամբիօն է բար-
 ձրանում ճեմարանի ուսուցիչ Գէորգ Ալթունեանը, որի
 բանախօսութեան ընդհանուր բովանդակութիւնն հետեւեալն
 է մօտաւորապէս.

Գէորգեան ճեմարանի տօնը՝ թէև մի սոսկ դպրոցական
 հանդէս, այսօր հետզհետէ դառնում է մեր կուլտուրական
 կեանքի տօներից մէկը, շնորհիւ այն հանգամանքի, որ նրա
 պատերի մէջ հայութեան զանազան հատուածներից
 ուսում առնող պատանիներն յետոյ իրանց հայրենիքում
 աշխատում են տասնապատիկ աւել ժողովրդին այն, ինչ
 որ նորա ստանում են ճեմարանում ու այդպիսով իրանց
 կենդանի գործունէութեան միջոցով կապում են ազգի ան-
 ջատ մասերը ճեմարանի հետ: Այդ միացնող գործու-
 նէութիւնը, որ պէտք է լինի յատկապէս հայ դպրոցի
 գերագոյն նպատակը, այսօր կատարում է Գէորգեան ճե-

մարանը թէև փոքր չափով: Դժբախտաբար հայ դպրոցը շատ մեծ կարիք ունի այդպիսի աշխատանքի, որովհետև հայերի պատմական կեանքը մշտական արգելք է եղել միատեսակ ու համերաշխ կուլտուրական կեանքի: Բանախօսն ապա իւր այդ մտքերը լուսաբանում է հայոց և հարևան երկիրների պատմութիւնից փերցրած համեմատութիւններով: Մէջ ընդ մէջ ճեմարանի քառաձայն խումբը երգում էր ազգային երգեր:

Այդ օրուայ ծրագրի մէջ մտնում էր նաև Մոսկուա-րնակ Արմաւիրցի եղբայրներ Թորոսեանների (Бр. Тарасовы) նուիրատուութեամբ ճեմարանի հարաւային բակում կառուցուելիք շէնքի հիմնարկութեան օրհնութիւնը: Ինքը նորին Վեհափառութիւնը բարեհաճեց իւր բարձր ներկայութեամբ կատարել օրհնութիւնը. այդ պատճառով անցաւ գէպի նոր շինութեան տեղը և անձամբ օրհնեց հիմքում դրուած քարը: Բնական զիտութիւններին յատկացուելիք այդ հիմնարկութեան օրհնութիւնից յետոյ նորին ս. Սծութիւնը միաբանութեամբ և ուղեկցող բազմութեամբ շրջապատուած մեկնեց գէպի վեհարան՝ ժամը արդէն 2¹/₂-ն էր:

Այդ օրը նորին Վեհափառութեան տօնի առթիւ վանքի սեղանատանը մօտ 200 հոգու համար հանդիսաւոր ճաշկերոյթ էր պատրաստուած: Ինքը՝ նորին Վեհափառութիւնը՝ խիստ յոգնած լինելու պատճառով՝ չկարողացաւ ներկայ գտնուել: Մի շարք կենացներ առաջարկուեցին, որոնցից առաջինը բնականաբար նորին Վեհափառութեանն էր: Նոյն օրը երեկոյեան վանքի բակում, ինչպէս նաև ճեմարանի բակում, հրափառութիւն կար: Վանքի ելիքարական կայեարանի կառավարիչ վարպետ Դևեդը և ճեմարանի ուսանող Դաւիթխանեանը բաց էին թողնում մեծ վարպետութեամբ գոյնզգոյն հրանօթներ, որով մեծ զուարճութիւն և բաւականութիւն էին պատճառում ամբոխին:

Երեկոյեան ժամը 9¹/₂-ին ճեմարանի տօնի առթիւ նախորդ տարիների նման ճեմարանական ընտանիքը՝ տեսուչը, ուսուցչական խումբը և աշակերտութիւնը հաւաքուեցին ճեմարանի սեղանատունը ընթրիքի: Խմբական եր-

գերը իրար յաջորդում էին անընդհատ. կարդացուեցին զանազան տեղերից ստացուած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրները, որոնցով հեղինակները՝ մեծ մասամբ ճեմարանի նախկին սաներ, հեռու նստած՝ իրենց խնդակցութիւնն ու ցնծութիւնն են յայտնում իրենց հոգեւոր մօր՝ ճեմարանի 38 ամեայ կեանքի համար և ցանկանում են յարատեւութիւն և բեղմնաւոր զործունէութիւն: Ունկնդիրներն, յատկապէս աշակերտները՝ իրենց խնդակցութիւնն յայտնում էին պատանեկական և երիտասարդական հասակին յատուկ բուռն ծափահարութիւններով: Ժամը ուղիղ 11¹/₂-ին փակուեց ճեմարանական ընտանիքի ուրախութիւնը և մենք արդէն կանգնած էինք հետեւեալ մեծ տօնի՝ ս. Միլոռոնի օրհնութեան՝ նախօրեակին:

Միլոռոնօրհնութիւնը՝ լինելով Հայաստանեայց եկեղեցւոյ մեծաշուք և նուիրական-կրօնական հանդէսներից մինը գրաւել էր ուխտաւորների ահագին բազմութիւնը, որ շտապել էր ս. Էջմիածին ներկայ լինելու ս. Միլոռոնի օրհնութեան այս մեծաշուք կրօնական հանդէսին: Կրօնական-ազգային հանդէսները հայ ժողովրդի հատուածների փոխադարձ յարաբերութեան և ծանօթութեան ամենազեղեցիկ միջոցներից մէկն են. հայ ժողովրդի հեռաւոր և մերձաւոր որդիները՝ համախմբուելով Էջմիածնում տեսնում են միմեանց, ծանօթանում են միմեանց կացութեան հետ. հեռաւոր հիւսիսի հայր, որ կտրուած է բուն երկրից, և իւր լեզուով, արտաքինով, նիստ ու կացով հետզհետեւ հեռանում է մայր ժողովրդից ու եկեղեցուց, տեսնելով հայրենի սրբութիւնները, կրօնապէս կրկին կարծես վերածնւում է: Այս պատճառով էլ հասկանալի է, թէ ինչո՞ւ դեռ օրեր առաջ Ռուսաստանի և Կովկասի զանազան վայրերից երկաթուղին ուխտաւորներ էր բերում ս. Էջմիածին այնպիսի բազմութեամբ, որ Միլոռոնօրհնէքի դեռ նախընթաց օրերին ո՞չ միայն վանքի հիւրատունն ու միաբանութեան սենեակներն էին լցուած, այլ և ճեմարանն ու այդ նպատակով պատրաստած միւս յարակից բոլոր տեղերը: Վաղարշա-

պատոււմ զժուար կարելի էր ճարել մի տուն, որ մի քանի հիւր չունենար, չնայած այս բոլորին, այնուամենայնիւ ուխտաւորների մեծագոյն մասը անց էր կացնում բաց երկնքի տակ, վանքի բակն ու պատերի տակը լցուած էին ուխտաւորների խմբերով, տպարանի և բաղնիսի մէջ զրտնուած ընդարձակ հրապարակը բռնուած էր ամբողջապէս. քիչ չէր նաեւ այնպիսիների թիւը, որոնք Վաղարշապատի հրապարակումն էին լուսացնում: Ուխտաւորների մեծ մասը բնականաբար Էջմիածնի շրջակայ գիւղերիցն էին և մօտակայ դաւառներից, Աղէքսաղրապօլից, Շիրակից, Հին-Նախիջևանից, Սուրմալուի գիւղերից, հեռաւորների մէջ աչքի էին ընկնում իրենց քանակով Թիֆլիսից, Ախալցխայից և Ախալքալիկից: Չտեսնուած բազմութիւն էր եկել Նոր-Նախիջևանի շրջակայ հայ գիւղերից, այդտեղ կարելի էր տեսնել հայկական բոլոր տարազներն ու հայկական բոլոր բարբառները: Քաղաքական աննպաստ պայմանների պատճառով Տաճկաստանից համարեա մարդ չէր եկել:

Միւռոնօրհնութեան հանդէսն սկսուեց շաբաթ օրը երեկոյեան, թէև 40 օր առաջ Միւռոնի կաթսան զրուած էր աւագ սեղանի վերայ և միաբանութիւնը ամեն օր՝ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ պաշտօն էր կատարում՝ կարդալով սեղանի վերայից ըստ պատշաճի տւետարանը և երգելով սահմանուած շարականը. վերջին անգամ այդ կարգը պիտի կատարուէր շաբաթ երեկոյեան, Վեհափառն այդ օրը մեծ շքով եկեղեցի իջաւ հոգեւոր դասի ուղեկցութեամբ: Իսկ երեկոյեան ժամերգութիւնից 3 ժամ անցած, մօտ ժամը 9-ին սկսուեց կիւրակի օրուայ գիշերային և առաւօտեան ժամերգութիւնը՝ հսկման կարգը:

Սեպտեմբեր 30-ը, կիւրակի օրը, տօների կենդրոնն էր. ամենքն անհամբեր սպասում էին պատարագի սկսուելուն. այդ օրը՝ մանաւանդ Վաղարշապատից, շրջակայ գիւղերից և երևանից ժողովուրդը հեղեղի նման էր թափուում Մայր-Աթոռ: Ժամը 9-ին հիշեցին Մայր-Տաճարի զանգերը, իւրաքանչիւր մարդ մտածում էր, թէ ինչպէս եկեղեցում իւր համար տեղ զտնի. Տաճարի դռները դեռ փակ էին

Ժողովրդի համար, թէև նա շատ վաղուց էր հաւաքուել և սպասում էր անհամբեր, թէ երբ պիտի բացուին նորա: Կարգապահութեան վերայ նախորդ օրերի նման հսկում էր ոստիկանութիւնը, որ վեհարանի դռնից սկսած մինչև Մայր-Տաճարի արևմտեան դուռը փակել էր երկու կողմից հաստ պարանով, իսկ պարանից այն կողմը չանցնելու համար հսկում էր զինուորների վաշտը՝ ղեկավարութեամբ հրամանատար սպայի և դաւառապետի: Ժողովուրդը՝ կենդանի պատնէշ կազմած՝ կանգնած էր զինուորների յետևը: Վանքի դռնից սկսած մինչև վեհարան ընդարձակ ճանապարհ էր բաց արած, որով պիտի անցնէր հանդէսի թափորը: Պատարագիչն այդ օր ինքը նորին Արքութիւնն էր. եպիսկոպոսները հաւաքուել էին վեհարան զգեստաւորուելու, իսկ մնացած եկեղեցական դասը եկել էր եկեղեցի, որպէսզի այդտեղից զգեստաւորուած ընդառաջ գնայ հանդիսին: Ժամը 9¹/₂-ին սկսուեց հանդիսաւոր երթը դէպի Տաճար. թափորը կազմուած էր այս կարգով. լայն բացուած ճանապարհի երկու կողմերով կարգապահ զինուորներին զուգահեռական կանգնած էին վանքի միաբանութիւնն ու քահանայական դասը երկկարգ՝ աջից և ձախից. սրանց մէջ դէպի առաջ կանգնած էին դպիր երգիչները, միաբանական և քահանայական դասերի շարքերի կողքից գնում էին՝ ամենից առաջ խաչվառակիրները, ապա լապտերակիրներն ու խաչակիրները՝ տօնական շապիկներ հագած, իսկ սրանց յետևից կաթուղիկոսական երկու կարմրադգեստ շաթիրները՝ գնտազլուխ ցուպերը ձեռքերին բռնած. սրանց անմիջապէս հետևում էին հայրապետական խորհրդանիշներն՝ խաչն ու գաւազանը՝ կրող երկու վարդապետներ՝ Սեսրոպ վրդ. Մաքսուտեան (ուսուցիչ Գ. հ. ճեմարանի) ձախ կողմից. Ներսէս վարդ. Տ. Միքայէլեան (ուսուց. Գ. հ. ճեմարանի) աջ կողմից, ապա դալիս էին 6 զոյգ զգեստաւորուած եպիսկոպոսներ երկկարգ՝ ձեռքներին սրբազան մասունքներ բռնած:

Սրանցից յետոյ դալիս էին երկու բուրվառակիրները՝ Սրտակ վարդապետ և Սբէլ արեղայ, որոնք աւագ սարկա-

ւազի զգեստներով յետընթաց բուրվառելով խնկարկում էին ս. Հայրապետին. սրանց հետեւում էին երկու քօղակիրները, որոնք 4 անկիւններից բռնած կաթուղիկոսի առջևից տանում էին հայրապետական կերպասեայ ոսկեթել և ծոպաւոր քօղը. ապա դալիս էին ամպհովանին կրող չորս իշխանները՝ բժշկապետ Բաղրատ Նաւաթարդեան, Յովհաննէս Շապօշնիկեան Ն. Նախիջևանցի, Սիմէօն Իզմիրեան Ղրղլարցի, Գաբրիէլ Այվաղեան Արմաւիրցի. իսկ ամպհովանու չորս անկիւնների զիմացը կանգնած էին քըշշոցակիր 4 սարկաւազները. թափօրի զլուխը՝ Վեհափառ Հայրապետը զգեստաւորուած, ձեռքին խաչն ու ականակուռ գաւազանը բռնած՝ գնում էր ամպհովանու տակ մտած. Վեհի աջ և ձախ կողմերից գնում էին քղանցակիր Զաւէն և Արիստակէս վարդապետները. թափօրը փակում էին լուսարարապետ Ղեռնդ եպիսկոպոսը և գաւազանակիր Բաղրատ վարդապետը, որոնցից յետոյ դալիս էին պատուաւոր հիւրերը՝ շղթայ կազմած. թափօրից մի փոքր յետոյ դալիս էր ուխտաւորների հոծ բազմութիւնը:

Հենց որ եկեղեցու զանգերն հնչեցին և դպիրներն սկսեցին «Խորհուրդ խորհին» երգել, թափօրն առաջ շարժուեց. տեսարանը խիստ պատկառելի էր և սրտաշարժ. այսպիսի հանդէսներ չտեսած մորդիկ յափշտակուած էին հոգեզմայլ բարեպաշտութիւնից և ազգային ոգևորութիւնից. քիչ չէին հասարակ ժողովուրդի մէջ և այնպիսիները, որոնք բախտի բերմամբ մօտիկ կանգնած լինելով և շատ մօտիկից դիտելով այս տեսարանը՝ ուժեղ զգացումով լցուած՝ լաց էին լինում:

Այսպիսի հանդիսաւորութեամբ թափօրը կանգ առաւ եկեղեցում, իսկ Նորին Վեհափառութիւնը տեղ բռնեց աւագ սեղանի առջև, ուր կատարուելու էր լուացման կարգը, որից յետոյ պատարագիչ սրբազնազոյն Հայրապետը՝ կատարելով մնացած կարգերը՝ 12 եպիսկոպոսների առաջնորդութեամբ հիւսիսային սանդուխներով բարձրացաւ աւագ բեմը և շարունակեց ս. պատարագը:

Զգեստաւորուած եպիսկոպոսները կանգնած էին սե-

ղանի երկու կողմերում երկկարգ, գաւաղանակիր Բաղրատ վարդապետը սեղանի ձախ կողմում տեղ բռնեց, իսկ Կաթուղիկոսական խորհրդանիշներ կրող վարդապետները տեղաւորուեցին աւագ եպիսկոպոսների կողքին:

Ժողովրդի մի մասը եկեղեցի մտել էր նախ քան Վեհափառի գալը, որից յետոյ միայն բացուեցին եկեղեցու երեք դուռն էլ: Եկեղեցի մտնելու և լաւ տեղ բռնելու համար սարսափելի իրարանցում էր ընկել ժողովրդի մէջ. անշուշտ այդ բազմութիւնից միայն մի փոքր մասին յաջողուեց մտնել և տեղ գտնել Մ. Տաճարում և ի մօտոյ տեսնել հանդէսը. բազմութեան մեծ մասը փնաց զրսում: Հնայեած դրան եկեղեցում ասեղ քցելու տեղ չկար. ամբոխը հոծ բազմութեամբ սեղմել էր իրար. անցուղարձը անհնարին էր. թէև Մայր Տաճարի լուսամուտները նախօրօք բաց էր արուած, բայց և այնպէս օդի ծանրութեան պատճառով ուշագնացութեան դէպքեր ևս տեղի էին ունենում:

Որոշ հետաքրքրութիւն էին ներկայացնում ուխտաւորներին շատերի համար նաև Թիֆլիսից եկած 9 կոյսերի ներկայութիւնը բեմի վերայ, որոնք եկեղեցական շորերն հագած, ուրարները քցած սպասաւորում էին պատարագի ամբողջ ընթացքում: Քշշոց անելով մայրապետ Հովհաննէ Թայիրեանցի զխաւորութեամբ, դրանցից Խօջամինասեան, Երմոնիա Բէրութչեան, Մարիամ Գօլմազեան, Կատարինէ Գուլոյեան կանգնած էին աջ կողմում, իսկ Խարազեան Շուշանիկ, Եփեմիա Վարդանեան, Հովհաննէ Ղոնեան և Գաթանէ Ալիսանեան՝ ձախ կողմում:

Նախ քան «Ողջոյն»ը, Կաթուղիկոսը բազմում է աթոռի վերայ՝ երեսը դարձրած գէպի ժողովուրդը, իսկ 12 եպիսկոպոսները շրջապատում են նրան. ապա եպիսկոպոսները կարգով կարգում են ս. Գրքից ընթերցուածներ և աւետարան, իսկ Կաթուղիկոսը ազօթքներ է կարգում: յետոյ էլի կարգում են ընթերցուածներ և աւետարան, երգում են շարականներ. վերջապէս աւագագոյն անդամը միաբանութեան մէջ, Տ. Սուբիաս արքեպիսկոպոսը կարգում է ս.

Միւռօնի նիւթի «երդմեցուցման» բանաձեւը. «երդմեցուցանեմ զքեզ նիւթ ձիթոյ» (եր. 26, Մաշտոյ), որից յետոյ Կաթուղիկոսը կարգում է ս. Գրքի վկայութիւններով Միւռօնի նշանակութիւնը պարզաբանող մի երկար աղօթք: Այս աղօթքի ընթերցումից յետոյ լուսարարապետը բաց է անում ս. Միւռօնի կաթսայի կափարիչը, իսկ դպիրներն երգում են «Բացեր Տէր այսօր զգանձդ երկնային», որի ժամանակ ս. Հայրապետը լցնում է կաթսայի մէջ նախ ծաղիկների նիւթերը, ապա Բալասանը. այնուհետեւ ձեռքն է առնում հին ս. Միւռօնը և «Առաքելոյ Աղաւնոյ» շարահանն երգելով, թափում է դարձեալ կաթսայի մէջ. այդ ժամանակ խփում են եկեղեցու զանգերը. դպիրներն երգում են «Ամէն ալէլուիա». ապա Կաթուղիկոսն առնում է կենաց փայտը, տեառնապրում է և խառնելով Միւռօնը՝ ասում է «Օրհնեսցի և սրբեսցի Միւռօնս» (եր. 30). ապա նոյն ձևով տեառնադրում և խառնում է ս. Գեղարդով և ս. Գրիգոր Լուսաւորչի աչով՝ երգելով «Օրհնեսցի և սրբեսցի» տունը. «Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ...» երգելուց յետոյ լուսարարապետը ծածկում է կաթսան իւր կափարիչով և քողով, ապա Կաթուղիկոսը կարգում է մի քանի համառօտ աղօթքներ և վերջն էլ «պահպանիչ» տառնով փակում է ս. Միւռօնի օրհնութեան հանդէսը, ապա «Ողջոյն» տառնով շարունակում է պատարագը. եպիսկոպոսները հերթով մօտենում և համբուրում են ս. Միւռօնի կաթսան:

Պատարագը վերջանալուց յետոյ եպիսկոպոսները նոյն կարգով, ձեռներին բռնած մասունքները ուղեկցում են Վեհափառին դէպի վեհարան: Այդտեղ պէտք էր տեսնել, թէ ինչպիսի ջերմեռանդութեամբ ժողովուրդը վրայ էր թափւում համբուրելու սրբազան մասունքները. ահազին եռանդ զործ զրուեցաւ մինչև եկեղեցուց դուրս եկան: Վեհափառը երբ վեհարան հասաւ ժամը 1-ն էր.

Թէև եկեղեցու դրսում և ներսում կարդապահութեան համար ամեն միջոց ձեռք առնուած էր, բայց և այնպէս, երբ պատարագը վերջացաւ, շատ դժուար էր պա-

հել ջերմեռանդ ժողովրդի յառաջխաղացումը, որ ցանկանում էր ս. Միլոսնի կաթսան տաք-տաք համբուրել, ծովի ալիքի նման յետ ու առաջ էր շարժւում ամբոխը, այդ օրը ամբողջ զիշերը ժողովուրդը գունդագունդ գլխում էր եկեղեցի համբուրելու համար ս. Միլոսնի կաթսան։ Լուսարարապետը միաբան վարդապետներին հերթապահութիւն էր նշանակել կաթսայի մօտ։

Կիւրակի միաբանական սեղանատանը մեծ տօնի առթիւ Կաթուղիկոսի ներկայութեամբ հանդիսաւոր ճաշերոյթ կար. ժամը մօտ 3-ին Նորին Վեհապառութիւնը բարեհաճեց իջնել սեղանատուն, ուր նորան սպասում էին 200-ից աւելի հիւրեր։ Հէնց որ Նորին Վեհապառութիւնը երեւաց սեղանատան դռների միջից, ամբողջ սեղանատունը ոտքի կանգնեց. Կաթուղիկոսը բռնեց իւր յատուկ տեղը՝ սեղանի զլխին, միաբանութիւնն ու հիւրերն էլ բռնեցին իրենց յատկացրած տեղերը։ Հանդիսաւոր ճաշերոյթին առաջարկուեցին կենացներ. առաջին բաժակը Նորին Վեհապառութիւնն առաջարկեց խմել Նորին Կալսեւական Մեծութիւն Թագաւոր Կալսեւ կենացը. Կաթուղիկոսի առաջարկութիւնն ընդունուեց ոտնկայս և ուռաներով։ Երկրորդ կենացը Թագուհի Կալսուհիների և Թագաժառանգ Արքայազն Ալէքսէյ Նիկօլաեւիչինն էր. այնուհետև խմեցին Փոխարքայի և նորա ամուսնու կենացները. բոլոր կենացներն էլ մեծ ցնծութեամբ ընդունուեց սեղանակիցների կողմից։ Զորրորդ բաժակն առաջարկուեց Նորին Վեհապառութեան կենացը. ամբողջ սեղանը ոտքի կանգնեց և ընդհանուր երգով պատուեց այս կենացը։ Մի փոքր անցած Նորին Վեհապառութիւնը թողեց սեղանակիցներին, որոնք Վեհի բացակայութեամբ շարունակեցին կենացների շարքը. խմեցին Հայոց ազգի, Էջմիածնի, Հայ հոգեւորականութեան, Հայ կոյսերի կենացները, բաժակաճառեր ասեցին Անանիայ Յուսիկ արքեպիսկոպոսները, Յուսիկ և Մեսրոպ վարդապետները, բժ. Բ. Նաւասարդեան և Մ. Զմշկեան։ Կենաց բաժակների վերայ երգւում էին մէջ ընդ մէջ հոգեւոր երգեր՝ «Էջմիածինն ի Հօրէ», «Այսօր երկնայինքն ուրախա-

ցան» և այլն: ձաշք վերջացաւ ժամը 4¹/₂-ին:

Երեկոյեան վանքի բակում մեծ հրավառութիւն կար, եղանակն էլ շատ նպաստաւոր էր. ամբողջ բակը լիքն էր զրօսնող բազմատարազ և բազմերանգ ուխտաւորներով. գերակշռողը դիւղացի ատրին էր: Գիւղացի հասարակ ժողովրդին մեծ բաւականութիւն էին պատճառում հրանօթները, որոնք իրենց բազմապիսի, դունեղ կրակէ լեզուններով և կայծերով, իրենց վեր ու վայր սլացումներով պայթիւններով ու հազարաւոր հրային աստղիկների բաժանումովը դէպի իրենց էին գրաւում ուխտաւորների աչքերն և ուշադրութիւնը: Մինչև ուշ դիշեր երկսեռ ժողովուրդը զրօսնում էր վանքի բակում: Հետեւեալ օրը՝ երկուշաբթի ուխտաւորներից շատերը սկսեցին վերադառնալ իրենց տեղերը՝ տանելով հետները քաղցր յիշողութիւններ ա. Էջմիածնի մասին: Երեքշաբթի վանքում համարեա ուխտաւոր չէր մնացել, բացի Տփիսիսի կուսանաց անապատի կոյսերից, որոնք Էջմիածնից մեկնելու էին շրջակայ պատմական վայրերը տեսնելուց յետոյ: Էջմիածնումն են Ռուսաստանի թեմերի բոլոր թեմակալ առաջնորդները, որոնք մնալու են այստեղ մինչև հոկտեմբերի 13-ի Մեծ Յորել-լեանի հանդիսին մասնակցելու համար:

Ա. Զ.

1912 թ. 5 հսկա.

Ս. Էջմիածին.